ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 07.12.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2017/60

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 23.10.2017թ. թիվ 03/26-3/19187-17 գրությամբ «ԿՈՄԵՐՑԻԱԼ ՊԱՐՏՆԵՐՍ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Սյունիքի մարզպետարանի 09.10.2017թ. թիվ 03/6957-17 և 23.10.2017թ. 01/7292-17 գրությունների հիման վրա, 23.10.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «ԿՈՄԵՐՑԻԱԼ ՊԱՐՏՆԵՐՍ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. <u>ՀՀ Սյունիքի մարզպետարանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ Սյունիքի մարզպետարանը 09.10.2017թ. թիվ 03/6957-17 և 23.10.2017թ. 01/7292-17 գրություններով դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««ԿՈՄԵՐՑԻԱԼ ՊԱՐՏՆԵՐՍ» ՍՊԸ-ն խախտել է իր և ՀՀ Սյունիքի մարզպետարանի միջև 2017թ. մայիսի 2-ին ՍՄ-ԲԸՀԱՇՁԲ-2017/2/2 ծածկագրով կնքված պայմանագրի 1.3 կետով ամրագրված պայմանները՝ առանձին աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները, ինչը որոշված է կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով:

Հիմք ընդունելով վերոնշյալը, ՍՄ-ԲԸՀԱՇՁԲ-2017/2/2 ծածկագրով կնքված պայմանագիրը 1-ին չափաբաժնի մասով միակողմանի լուծվել է:

Ի լրումն 09.10.2017թ. թիվ 03/6957-17 գրության, ՀՀ Սյունիքի մարզպետարանը 23.10.2017թ. թիվ 01/7292-17 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնել է նաև, որ ՍՄ-ԲԸՀԱՇՁԲ-2017/2/2 ծածկագրով կնքված պայմանագիրը 2-րդ չափաբաժնի մասով նույնպես միակողմանի լուծվել է:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էր ՀՀ Սյունիքի մարզպետարանի լիազորված ներկայացուցիչ Տիգրան Մկրտչյանը:

3. <u>«ԿՈՄԵՐՑԻԱԼ ՊԱՐՏՆԵՐՍ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«ԿՈՄԵՐՑԻԱԼ ՊԱՐՏՆԵՐՍ» ՍՊԸ-ն Խորհրդին 30.11.2017թ. թիվ 54619-17 գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ընկերությունը գտնում է, որ բավարար հիմքեր առկա չեն Ընկերությանը Ցուցակում ներառելու համար՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Սյունիքի մարզպետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է գնման ընթացակարգ:

Գնման ընթացակարգի արդյունքում 2017թ. մայիսի 2-ին Պատվիրատուի և Ընկերության միջև կնքվել է պետության կարիքների համար շինարարական աշխատանքների կատարման թիվ ՍՄ-ԲԸՀԱՇՁԲ-2017/2/2 ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

Պայմանագրի՝

1.1 կետի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվում է նույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել նույն պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կարիքների համար Սիսիանի համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման շինարարական աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.3 կետի համաձայն՝ նույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (հավելված թիվ 2):

Պայմանագրի 3.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.2 կետի համաձայն՝ Ընկերության կողմից նույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Ընկերությունից վճարելու նույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 կետի «բ» պարբերության համաձայն՝ միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Ընկերությունը խախտել է նույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը:

Պայմանագրի 3. 2 կետի համաձայն՝ Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 կետի համաձայն՝ աշխատանքը կատարելիս աջակցել Ընկերությանը նույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

Պայմանագրի 3. 4 կետի համաձայն՝ Ընկերությունը պարտավոր է՝

3.4.1 կետի համաձայն՝ աշխատանքի առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, նույն պայմանագրում նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

Պայմանագրի թիվ 2 հավելվածի՝ Սիսիանի համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկի համաձայն՝ «ԿՈՄԵՐՑԻԱԼ ՊԱՐՏՆԵՐՍ» ՍՊԸ-ն Սիսիանի համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկի համապատասխան ժամկետներում կատարել է առկա 4 կետերից 3 կետ, բացի 4-րդ կետով նշված «Սիսական փողոց թիվ 46 բ/բ շենքի տանիքի վերանորոգում» աշխատանքից:

Վերը նշված կետով աշխատանքները ժամկետին չկատարելու պատճառը եղել է այն, որ թիվ 1 հավելվածով նախատեսված նախագծում տեղի է ունեցել նախագծային թերություններ, սխալ է՝ հաշված եղել աշխատանքների համար նախատեսված ընդհանուր պայմանները: Նախագիծը նաև փորձաքննություն չի անցել:

Ընկերությունը հավաստում է, որ եթե չլիներ այդ և առկա մի քանի խոչընդոտներ, ապա սահմանված ժամկետում կկարողանար ավարտին հասցնել Պայմանագրով նախատեսված 1-ին չափաբաժնի մասով նախատեսված աշխատանքները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 707-րդ հոդվածի համաձայն՝

1. Կապալի պայմանագրում նշվում են կատարման ենթակա աշխատանքի գինը կամ այն որոշելու եղանակները: Պայմանագրում նման ցուցումների բացակայության դեպքում գինը որոշվում է սույն օրենսգրքի 440-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան:

2. Աշխատանքի գինը կարող է որոշվել նախահաշիվ կազմելու միջոցով:

Այն դեպքում, երբ աշխատանքը կատարվում է կապալառուի կազմած նախահաշվին համապատասխան, նախահաշիվն ուժի մեջ մտնում և պայմանագրի մաս է դառնում պատվիրատուի կողմից հաստատվելու պահից:

3. Աշխատանքի գինը (նախահաշիվը) կարող է լինել մոտավոր կամ կայուն:

4. Եթե առաջացել է լրացուցիչ աշխատանք կատարելու անհրաժեշտություն, որի պատճառով էապես ավելացել է աշխատանքի համար սահմանված մոտավոր գինը, կապալառուն պարտավոր է այդ մասին ժամանակին զգուշացնել պատվիրատուին: Պատվիրատուն, որը համաձայն չէ կապալի պայմանագրում նշված գնի ավելացման հետ, իրավունք ունի հրաժարվել պայմանագրից: Այդ դեպքում կապալառուն կարող է պատվիրատուից պահանջել վճարելու աշխատանքի կատարած մասի գինը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 741-րդ հոդվածի համաձայն՝

1. Կապալառուն պարտավոր է շինարարությունը և դրա հետ կապված աշխատանքներն իրականացնել աշխատանքի ծավալը, բովանդակությունն ու դրան ներկայացվող այլ պահանջները սահմանող նախագծային փաստաթղթերին և աշխատանքի գինը որոշող նախահաշվին համապատասխան:

Շինարարական կապալի պայմանագրում այլ ցուցումների բացակայության դեպքում ենթադրվում է, որ կապալառուն պարտավոր է կատարել նախագծային փաստաթղթերում և նախահաշվում նշված բոլոր աշխատանքները:

2. Շինարարական կապալի պայմանագրով պետք է սահմանված լինեն նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը, ինչպես նաև պետք է նախատեսված լինի, թե կողմերից որը ու ինչ ժամկետում պետք է ներկայացնի համապատասխան փաստաթղթերը:

3. Կապալառուն, շինարարության ընթացքում հայտնաբերելով նախագծային փաստաթղթերում հաշվի չառնված աշխատանքներ և դրանց հետ կապված լրացուցիչ աշխատանքներ կատարելու և շինարարության նախահաշվային արժեքն ավելացնելու անհրաժեշտություն, պարտավոր է այդ մասին հաղորդել պատվիրատուին:

Տասնօրյա ժամկետում պատվիրատուից իր հաղորդման պատասխանը չստանալու դեպքում կապալառուն պարտավոր է դադարեցնել համապատասխան աշխատանքները՝ պարապուրդից առաջացած վնասները հաշվարկելով պատվիրատուի հաշվին, եթե դրա համար այլ ժամկետ սահմանված չէ շինարարական կապալի պայմանագրով: Պատվիրատուն ազատվում է այդ վնասները հատուցելու պարտականությունից, եթե ապացուցում է լրացուցիչ աշխատանքներ կատարելու անհրաժեշտության բացակայությունը:

4. Սույն հոդվածի 3-րդ կետում սահմանված պարտականությունները չկատարած կապալառուն զրկվում է պատվիրատուից իր կատարած լրացուցիչ աշխատանքների

վարձատրություն և դրանցից բխող վնասների հատուցում պահանջելու իրավունքից, եթե չի ապացուցում, որ անհապաղ գործողությունների անհրաժեշտությունը բխել է պատվիրատուի շահերից, մասնավորապես, պայմանավորված է եղել այն պարագայով, որ աշխատանքը դադարեցնելը կարող էր հանգեցնել շինարարական օբյեկտի վնասման կամ փլուզման:

5. Լրացուցիչ աշխատանքներ կատարելու և դրանց վարձատրության համար պատվիրատուի համաձայնության դեպքում կապալառուն իրավունք ունի հրաժարվել դրանք կատարելուց միայն այն դեպքերում, երբ այդպիսիք չեն մտնում կապալառուի մասնագիտական գործունեության բնագավառի մեջ, կամ կապալառուն չի կարող կատարել իրենից անկախ պատճառներով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 742-րդ հոդվածի համաձայն՝

1. Պատվիրատուն իրավունք ունի նախագծային փաստաթղթերում փոփոխություններ կատարել՝ պայմանով, որ դրանցից բխող լրացուցիչ աշխատանքներն իրենց արժեքով չգերազանցեն նախահաշվում նշված շինարարության ընդհանուր արժեքի տասը տոկոսը և չփոխեն շինարարական կապալի պայմանագրում նախատեսված աշխատանքների բնույթը:

2. Նախագծային փաստաթղթում նույն հոդվածի 1-ին կետում նշված ծավալից ավելի փոփոխությունները կատարվում են կողմերի համաձայնությամբ կազմված լրացուցիչ նախահաշվի հիման վրա:

3. Կապալառուն, նույն օրենսգրքի 466-րդ հոդվածին համապատասխան, իրավունք ունի պահանջել վերանայելու նախահաշիվը, եթե իրենից անկախ պատճառներով աշխատանքի արժեքն ավելի քան տասը տոկոսով գերազանցել է նախահաշվով նախատեսվածից:

4. Կապալառուն իրավունք ունի պահանջել հատուցելու նախագծային փաստաթղթերի թերությունները պարզելու և դրանք վերանայելու հետ կապված ողջամիտ ծախսերը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Պայմանագրի 3.4.1 կետի համաձայն՝ Ընկերությունը պարտավոր է՝ աշխատանքի առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, նույն պայմանագրում նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

Ելնելով վերոգրյալ իրավական և փաստական հանգամանքներից, գտնում ենք, որ «Կոմերցիալ Պարտներս» ՍՊԸ-ն Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված՝ պայմանագրով նախատեսված պարտավորություն չի խախտել, ինչի պայմաններում խնդրում ենք Ընկերությանը չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:»:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էր Ընկերության փոխտնօրեն Արամայիս Հարությունյանը և Ընկերության կողմից լիազորված անձ Ռաֆայել Մկրտչյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2017/60 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 23.10.2017թ. թիվ 03/26-3/19187-17 գրությունը, ՀՀ Սյունիքի մարզպետարանի 09.10.2017թ. թիվ 03/6957-17 և 23.10.2017թ. 01/7292-17 գրությունները, Պատվիրատուի կողմից Խորհրդին ուղղված էլեկտրոնային գրությունը, ՀՀ Սյունիքի մարզպետարանի և «ԿՈՄԵՐՑԻԱԼ ՊԱՐՏՆԵՐՍ» ՍՊԸ-ի միջև 02.05.2017թ. կնքված N ՍՄ-ԲԸՀԱՇՁԲ-2017/2/2 ծածկագրով գնման պայմանագիրը, Ընկերության կողմից ներկայացված գրավոր դիրքորոշումը.

ՀՀ Սյունիքի մարզպետարանի և «ԿՈՄԵՐՑԻԱԼ ՊԱՐՏՆԵՐՍ» ՍՊԸ-ի միջև 02.05.2017թ. կնքվել է N ՍՄ-ԲԸՀԱՇՁԲ-2017/2/2 ծածկագրով գնման պայմանագիր (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Կատարողը պարտավորվում է կատարել նույն պայմանագրի N1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Սիսիան համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման աշխատանքները (այսուհետ՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքները և վարձատրել դրա համար:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ նույն պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, Աշխատանքի տեխ.բնութագրին, ինչպես նաև նույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

Պայմանագրի 1.3 կետի համաձայն՝ նախատեսված առանձին աշխատանքների փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացույցային գրաֆիկով (Հավելված 2):

Պայմանագրի 8.5 կետի համաձայն՝ Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև նույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը, Պայմանագրի կողմից առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

Պայմանագրի Հավելված 2-ով նախատեսված աշխատանքների կատարման օրացույցային գրաֆիկի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրի 1-ին չափաբաժնի աշխատանքներն ավարտել մինչև 30.09.2017թ., իսկ 2-րդ չափաբաժնի աշխատանքներն ավարտել մինչև 30.08.2017թ.:

Պատվիրատուն 20.10.2017թ. թիվ 03/7291-17 գրությամբ դիմել է «ԿՈՄԵՐՑԻԱԼ ՊԱՐՏՆԵՐՍ» ՍՊԸ-ին՝ հայտնելով հետևյալը.

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Կատարողը պարտավորվում է կատարել նույն պայմանագրի N1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Սիսիան համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման

աշխատանքները (այսուհետ՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքները և վարձատրել դրա համար:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ նույն պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, Աշխատանքի տեխնիկական բնութագրին, ինչպես նաև նույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

Պայմանագրի 1.3 կետի համաձայն՝ նախատեսված առանձին աշխատանքների փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացույցային գրաֆիկով (Հավելված 2):

Պատվիրատուն հայտնել է նաև, որ Պայմանագրի Հավելված 2-ով նախատեսված աշխատանքների կատարման օրացույցային գրաֆիկի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրի 1-ին չափաբաժնի աշխատանքներն ավարտել մինչև 30.09.2017թ.:

Միաժամանակ, Պատվիրատուն նույն գրությամբ հավելել է, որ հաշվի առնելով աշխատանքային կատարման օրացուցային գրաֆիկից շեղումը, Պայմանագրի 8.5 կետի համաձայն՝ կատարողին օրացուցային գրաֆիկի ավարտի օրը առաջարկվել է ստորագրել Պայմանագիրը երկարաձգելու համաձայնագիր 15 օրացուցային օր ժամկետով՝ աշխատանքները պատշաճ ավարտին հասցնելու նպատակով, սակայն Կատարողը աշխատանքները չի ավարտել կնքված համաձայնագրի 2.1 կետով նախատեսված ժամկետներում: Ուստի, ղեկավարվելով ՍՄ-ԲԸՀԱՇՁԲ-2017/2/2 ծածկագրով գնման պայմանագրի 3.1.4 կետի «բ» ենթակետով, Պատվիրատուն 1-ին չափաբաժնի մասով մասնակի միակողմանի լուծել է պայմանագիրը:

«ԿՈՄԵՐՑԻԱԼ ՊԱՐՏՆԵՐՍ» ՍՊԸ-ին ուղղված մեկ այլ գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի և Ընկերության միջև կնքված ՍՄ-ԲԸՀԱՇՁԲ-2017/2/2 ծածկագրով գնման պայմանագրով նախատեսված «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի դիահերձարանի շենքի հիմնանորոգում» օբյեկտի 3.1.4 կետի «բ» ենթակետի պահանջները (պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների փուլերի և ծավալների կատարման ժամկետները)՝ տեղեկացնում է

Ընկերությանը, որ ՀՀ Սյունիքի մարզպետարանի կողմից լուծարվում է վերը նշված պայմանագրի 2-րդ չափաբաժնին վերաբերվող մասը, միաժամանակ կիրառելով նույն Պայմանագրի 6.2 կետի պահանջները (Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում կատարողից յուրաքանչյուր ուշացած օրվա համար կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0.05 տոկոսի չափով տույժի գանձումը):

Պատվիրատուն 01.11.2017թ. Խորհրդին ուղղված էլեկտրոնային գրությամբ հայտնել է, որ սահմանված ժամկետներում կատարողը չի ավարտել վերոնշյալ շինարարական աշխատանքները, ուստի՝ ղեկավարվելով ՍՄ-ԲԸՀԱՇՁԲ-2017/2/2 ծածկագրով գնման պայմանագրի 3.1.4 կետի «բ» ենթակետով, Պատվիրատուն 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով մասնակի միակողմանի լուծել է պայմանագիրը:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով Խորհրդում կայացած նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը պնդեց Խորհրդին ուղղված էլեկտրոնային գրությամբ հայտնած դիրքորոշումը և հավելեց, որ Պայմանագրի 8.5 կետի համաձայն՝ օրացուցային գրաֆիկի ավարտի օրը Ընկերությանն առաջարկվել է ստորագրել «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի դիահերձարանի շենքի հիմնանորոգում» օբյեկտի մասով պայմանագիրը երկարաձգելու համաձայնագիր՝ 15 օրացուցային օր ժամկետով, սակայն Ընկերությունը հրաժարվել է ստորագրել առաջարկված համաձայնագիրը: Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց նաև, որ «Սիսիան համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման» չափաբաժնի «Սիսական փողոց թիվ 46 բ/բ շենքի տանիքի վերանորոգում» առարկայի մասով Ընկերությունը ստորագրել է Պայմանագիրը 15 օրացուցային օր ժամկետով երկարաձգելու համաձայնագիրը, սակայն նույն մասով նախատեսված աշխատանքը չի ավարտել նաև այդ ժամանակահատվածում:

Ընկերության ներկայացուցիչն ընդունեց, որ «Սիսիանի համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման» աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկի համապատասխան ժամկետներում կատարել է նախատեսված 4 բազմաբնակարան շենքերի տանիքներից 3-ի վերանորոգման աշխատանքները, բացառությամբ «Սիսական փողոց թիվ 46 բ/բ շենքի տանիքի վերանորոգում» աշխատանքից, թեև պնդեց, որ նշված աշխատանքները ժամկետում չկատարելու պատճառը Պայմանագրի թիվ 1 հավելվածով

նախատեսված նախագծում տեղ գտած նախագծային թերություններն են, ինչպես նաև աշխատանքների համար նախատեսված ընդհանուր պայմանների ոչ ճշգրիտ հաշվարկը:

Խորհրդի այն հարցին, թե արդյո՞ք Ընկերությունը Պայմանագրի կատարման ընթացքում ի հայտ եկած թերությունների վերաբերյալ տեղեկացրել է Պատվիրատուին, վերջինս պատասխանեց, որ Պատվիրատուն տեղեկացվել է բանավոր կարգով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ «ԿՈՄԵՐՑԻԱԼ ՊԱՐՏՆԵՐՍ» ՍՊԸ-ն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները սահմանված ժամկետում չկատարելով, խախտել է Պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ինչը հանգեցրել է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի մասնակի լուծմանը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ «ԿՈՄԵՐՑԻԱԼ ՊԱՐՏՆԵՐՍ» ՍՊԸ-ն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Խորհրդին ներկայացված պաշտոնական ընթացակարգով առկա չէ որևէ տեղեկատվություն կամ ապացույց այն

մասին, որ Ընկերությունը հայտը ներկայացնելու նախորդող տարվա ընթացքում թույլ է տվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված որևէ խախտում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «ԿՈՄԵՐՑԻԱԼ ՊԱՐՏՆԵՐՍ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով, 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 23.10.2017թ. «ԿՈՄԵՐՑԻԱԼ ՊԱՐՏՆԵՐՍ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**